21.08

Հայաստանի Հանրապետություն
Երևանի քաղաքապետարան
«Բնակչության հատուկ սպասարկում» ՀՈԱԿ
ք.Երևան 41, Էրեբունի 6/1 Հեռ. 010. 43 92 16

ԵՐԵՎԱՆԻ
ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

N 62/391

«21» 08 2023 թ.

Որոշում N 01

«Վահագն Կեսոյան» ԱՁ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ

Գնման ընթացակարգի ծածկագիր՝ «ԲՀՍ-ԳՀԱՊՁԲ-2023/5»

Մասնակից՝ «Վահագն Կեսոյան» ԱՁ

/ՀՎՀՀ՝ 74429213, գործունեության հասցե՝ ք. Երևան, Աճեմյան 15, հեռ. +37494170392, atenders@list.ru /

1. «ԲՀՍ-ԳՀԱՊՁԲ-2023/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշում

«Բնակչության հատուկ սպասարկում» ՀՈԱԿ-ի կարիքների համար համակարգիչների ձեռքբերման նպատակով 15.06.2023թ. հայտարարվել է «ԲՀՍ-ԳՀԱՊՁԲ-2023/5» ծածկագրով գնման ընթացակարգ, որի արդյունքում «Վահագն Կեսոյան» ԱՁ-ն (այուհետև նաև՝ Մասնակից) 2-4 չափաբաժինների մասով հայտարարվել է ընտրված մասնակից:

«Վահագն Կեսոյան» ԱՁ-ն սահմանված ժամկետներում՝ 02.08.2023թ-ը ներառյալ չի ներկայացրել պայմանագրի՝ իր կողմից հաստատված օրինակները, ինչպես նաև պայմանագրի և որակավորման ապահովումները՝ ուղեկցող գրությամբ:

2. Հիմնավորում և եզրահանգում

«Գնումների մասին» ՀՀ՝ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Պայմանագրի և (կամ) որակավորման ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել ապահովումը:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասին համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո

սույն օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամկետում չի ստորագրում պայմանագիրը կամ պատվիրատուին չի ներկայացնում պայմանագրի և (կամ) որակավորման ապահովումը, իսկ կնքվելիք պայմանագրով կանխավճար նախատեսված լինելու դեպքում՝ նաև կանխավճարի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

«Գնումների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման կամ պայմանագրի ապահովումը կամ համաձայնագիրը կնքելու նպատակով պայմանագիրը կնքած անձը չի փոխարինում տուժանքի ձևով ներկայացված որակավորման կամ պայմանագրի ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Ելնելով վերոգրյալից, ակնհայտ է, որ գնման գործընթացի մասնակից հանդես եկած «Վահագն Կեսոյան» ԱՁ-ն՝ չներկայացնելով իր կողմից հաստատված պայմանագրի օրինակն ու պայմանագրի և որակավորման ապահովումները, զրկվել է պայմանագիրը կնքելու իրավունքից:

Ղեկավարվելով Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, այն է՝ Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա, որոշում եմ «Վահագն Կեսոյան» ԱՁ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ԱԼԱՄՎԵԼ ՄԵԼՔՈՆՅԱՆ

Կատարող՝ Ա. Խաչատրյան
Գնումների համակարգող
Հեռ. /094/ 53 71 63